

Ելենա Հ. Էթարյան
Բանաս. գիյր. թեկնածու

ՄԵՏԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ*

Բանալի բառեր – գրականության ինքնահղում, ինքնախորհրդածում, մետահորինվածք, մետալեզու, մետապատում, մետանկարագրում, պատրանքազերծ, պատրանքաստեղծ մետականացման հնարներ:

Մուտք

Չնայած մետահորինվածքը և գրականության ինքնահղումի մյուս ձևերը հաճախ դիտարկվում են որպես պոստմոդեռնիստական գրականությանը բնորոշ գծեր, այնուհանդերձ ինքնախորհրդածման դրսևորումների կարելի է հանդիպել տարբեր դարաշրջաններում, գրական ժանրերում, արվեստի զանազան ճյուղերում:

Գրականության ինքնախորհրդածման երևույթի լայն տարածմանը նպաստում են ոչ միայն «գրականության ինքնանդրադարձի» ու ինքնախորհրդածման՝ որպես պոետիկական լեզվի, հիմնարար առանձնահատկության կառուցվածքաբանական ստեղծումները¹, այլ նաև այն հասկացությունների բազմազանությունը և բազմատեսակությունը, որոնք լայն տարածում են գտել գրականության մեջ ինքնախորհրդածման երևույթների սահմանման և հետազոտության ասպարեզներում. դրանցից են «աուտոռեֆլեքսիվությունը» (“Autoreflexivität”²), «ինքնախորհրդածումը» (“Selbstreflexion”³), «ինքնավերաբերությունը» (“Selbstreferenz”⁴), «ինքնավերաբերվածությունը» (“Selbstreferentialität”⁵), «գրական ինքնանդրադարձը» (“literarische Rekursivität”⁶),

*Հոդվածն ընդունվել է տպագրության 20.11.2017:

1 Հմմտ. **Scheffel, Michael**: Formen selbstreflexiven Erzählens. Eine Typologie und sechs exemplarische Studien. Tübingen: Niemeyer 1997, S.11.

2 **Hempfer, Kalus W.**: “Die potenzielle Autoreflexivität des narrativen Diskurses und Aristos, Orlando Furioso”. In: **Eberhard Lämmert** (Hrsg.): Erzählforschung. Ein Symposium. Stuttgart: Metzler 1982, S. 130-156

3 **Scheffel, M.**, ebd.

4 **Reinfandt, Christoph.**: Selbstreferenz. In: **Ansgar Nünning** (Hrsg.): “Metzler Lexikon. Literatur und Kulturtheorie. Ansätze – Personen – Grundbegriffe”. Stuttgart/Weimar: Metzler 2004 [1998], S. 601.

5 **Groß, Thomas**: “...gerade wie im Gespräch...”. Die Selbstreflexivität der Texte. Heinrich von Kleist. Würzburg: Königshausen & Neumann 1995.

6 **Wolf, Werner**: Ästhetische Illusion und Illusionsdurchbrechung in der Erzählkunst. Theorie und Geschichte mit Schwerpunkt auf englischen illusionsstörenden Erzählen. Tübingen: Niemeyer 1993.

«ինքնախորհրդածությունը» (“Selbstreflexivität”⁷) և «ինքնահղումը» (“Rückbezüglichkeit”⁸), ընդհուպ մինչև «բազմապատկումը» (“Potenzierung”)⁹ որպես «գրական նշանների աստիճանավորված կրկնության»⁹ բոլոր ձևերի գլխավոր հասկացություն:

Բացի այդ՝ հարկ է նշել համեմատաբար նոր հասկացություններ, որոնք առաջացել են Ալֆրեդ Թարսկիսի՝ մետալեզվի հասկացության համատեքստում¹⁰ և գործածվում են «մետականացման» գլխավոր հասկացության առիթով, ինչպես, օրինակ, «մետադրամա/մետաթատրոն»¹¹, «մետահորինվածք»¹² և «մետաքնարերգություն»¹³, համապատասխանորեն՝ «մետապոեզիա», «մետակենսագրություն»¹⁴ ու «մետապատմագրություն» և այլն: Այս հասկացություններից զատ, որոնք նկարագրում են բազմապատկման, այլ կերպ ասած՝ ինքնախորհրդածման գրական երևույթներ, կարելի է հանդիպել նաև հետևյալ հասկացությունների. «մետատեքստայնության», «մետահաղորդակցման», «մետադիսկուրսիվության» կամ «մետաքննադատության»:

Թեև այս բոլոր հասկացությունները տեսական գրականության մեջ լայն գործածություն ստացան 1960-ականներին և ամենից առաջ օգտագործվեցին պոստմոդեռնիստական ու գրական փորձերի պատկերման հնարների նկարագրության համար, այնուամենայնիվ մետականացման երևույթների ուսումնասիրության զարգացումը նշմարվում էր դեռևս ռուս ֆորմալիստների, կառուցվածքաբանների մոտեցումներից ընդհուպ դեկոնստրուկտիվիստականը: Ընդ որում, այս երևույթը հանդես է գալիս՝ կապված «լեզվի յուրահատուկ գեղագիտական, այլ կերպ՝ պոետիկական գործառույթի գլխաբառի հետ»¹⁵: Գեղագիտական ինքնավերաբերության տարբեր ձևերը զանազանելու համար 1960-ականներին առաջ եկան «մետա» բաղադրիչով բաղադրյալ տարբեր բառեր, որոնք կազմվել են «մետալեզու» և «մետահորինվածք» բառերի նմանությամբ ու ստացել լայն տարածում:

1970-աններին անգլո-ամերիկյան հետազոտություններում՝ Վիլյամ Հ. Գասի «Գեղարվեստական գրականություն և կյանքի կերպարները»¹⁶ աշխատության և Ռոբերտ Շոլզի հեղինակած «Ֆարուլան և մետահորինվածքը»¹⁷ խորագրով մենագրության մեջ, առաջին անգամ լույս է սփռվում «մետահորինվածք» հասկացության տարբերակված ընկալման վրա: Այդ

7 Huber, Werner/Martin Middeke/Hubert Zapf (Hrsg.): Self-Reflexivity in Literature. Text & Theorie 6. Würzburg: Königshausen & Neumann 2005.

8 Breuer, Rolf: Rückbezüglichkeit in der Literatur. In: Paul Watzwick (Hrsg.): “Die erfundene Wirklichkeit. Wie wissen wir, was wir zu wissen glauben? Beiträge zum Konstruktivismus”. München/Zürich: Piper 1984, [1981], S. 138-158.

9 Fricke, Harald: Potenzierung. In: Jan-Dirk Müller (Hrsg.): “Realexikon der deutschen Literaturwissenschaft”. Neubearbeitung des Realexikons der Deutschen Literaturgeschichte, Bd. III P-Z. Berlin/New York: de Gruyter 2003, S. 144-147.

10 Ebd., S. 145.

11 Krieger, Gottfried: Metadrama/Metatheater. In: Ansgar Nünning (Hrsg.): “Metzler Lexikon. Literatur und Kulturtheorie. Ansätze – Personen – Grundbegriffe”. Stuttgart/Weimar: Metzler 2004, [2001]. S. 446-447.

12 Հմն. Wolf, Werner: Metafiktion. In: Ansgar Nünning (Hrsg.), ebd. 2004a. [1998].

13 Müller-Zetzelmann, Eva: In: Ansgar Nünning (Hrsg.), ebd., S. 449-450.

14 Nadj, Julijan: Die fiktionale Metabiographie. Gattungsgedächtnis und Gattungskritik in einem neuen Genre der englischsprachigen Erzählliteratur. Trier: WVT 2006.

15 Reinfandt, Christoph, ebd., S. 601.

16 Gass, William H.: Fiction and the Figures of Live. New York: Knopf 1970.

17 Scholes, Robert: Fabulation and Metafiction. Chicago/Urbanda, IL: University of Illinois Press 1979.

ժամանակահատվածում մետաերևույթներն ավելի լայն տարածում են ստանում տեսական գրականության մեջ, ընդ որում, դրանք ընկալվում են որպես «սոցիալական և մշակութային աճող ինքնագիտակցության»¹⁸ (“increased social and cultural selfconsciousness”) մի մաս:

Արդեն իսկ բառի ծագումնաբանությունից հասկանալի է դառնում մետականացման երևույթների էական կողմը, ասել է թե՛ հունարենից սերված **meta**-ն **նշանակում է «մեջտեղում, միջև», «հետևում, հետո», ինչը մատնանշում է այն փաստը, որ մետականացումները մշտապես պարունակում են տեքստային, ճանաչողական ինքնախորհրդածման ավելի բարձր մակարդակներ, որոնցից մեկնաբանվում և/կամ բնութագրվում են օբյեկտիվ մակարդակի երևույթները:** Հենց տեքստային այս ավելի բարձր մակարդակից էլ տեքստը ինքնախորհրդածում է «տեքստայնության, այլ կերպ՝ միջնորդավորվածության մասին՝ իրենց պայմաններով ու առանձին հատկություններով [...] հանդերձ կամ [դրդում է] նման ինքնախորհրդածումների [...]»¹⁹:

Այստեղից միաժամանակ բխում է **«մետա»–տերմինաբանության հետ կապված խնդիրը**, մասնավորապես դրա բազմազանության, ինչպես նաև անհետևողական կիրառման հետ կապված խնդիրները. մի կողմից՝ մետառեֆլեքսիաները կարող են իրականանալ տարբեր հնարների միջոցով, մյուս կողմից՝ բովանդակությունը կամ մետականացման տարրերի հարաբերությունները կարող են լինել ծայրահեղ տարաբնույթ: Բացի այդ՝ մետականացման տարբեր հնարները կարող են ունենալ տարբեր գործառույթներ: Այստեղից էլ անհրաժեշտություն է բխում համակարգելու մետավերաբերական ձևերի ու սահմանումների անեզր դաշտը, ինչպես նաև, ըստ առանձին հեղինակների երկերի քննության, դուրս բերելու իրենց պատմական տարբեր գործառույթները:

1. Մետականացման գործառույթային ներուժը

Արդեն իսկ ելնելով գրական ու պատմամշակութային դրսևորման տարբեր ձևերից և նախադրյալներից՝ անբավարար է թվում մետականացման ձևերի նույնացումը առավելապես պատրանքագերծման գործոնների հետ, քանի որ այս գործառույթային սահմանափակումը հաշվի չի առնում այն, որ մետականացման տարրերը թողնում են նաև պատրանքաստեղծ ազդեցություն: Ուստի մետականացման գործառույթային ներուժի բազմազանության բացահայտումն այսօր հետազոտության հիմնական բացերից է:

Նշելի է այն փաստը, որ մետականացում ասելով՝ հասկանում ենք տրանսպոզիցիոնալ և տրանսլոկալային երևույթ: Ելնելով մակարդակների տարբերակման չափանիշից՝ սկզբունքորեն կարելի է տարանջատել մետականացման ձևի համակարգման երեք հնարավորություն. նախ՝ տարբեր տեսակներ՝ ըստ մետականացման առաջացման շրջանակի, այն է՝ արվեստի ոլորտ կամ հիմնական ժանրեր: Ըստ այս բաժանման՝ տար-

18 **Wagh, Patricia.**: *Metafiction. The Theory and Prattice of Self-conscious Fiction.* London: Methuen 1984.

19 **Wolf, Werner,** ebd, S. 70.

բերակում ենք, օրինակ, մետաթատրոն, մետահորինվածք, մետաքնարերգություն, մետակենսագրություն, մետակոմիքս կամ մետաֆիլմ: Երկրորդ հնարավորությունը վերաբերում է բովանդակությանը կամ մետականացման առարկայական ոլորտին: Խոսույթի ձևերի կամ եղանակների համաձայն՝ տարբերակում ենք մետապատում, մետանկարագրում և մետամեկնաբանություն: Տիպաբանացման փորձերի երրորդ մոտեցումը մետականացման գործառույթային զանազան հնարավորություններն են: Ընդ որում, վերջիններիս համակարգման հարցը շատ ավելի խնդրահարույց է, քան իրենց ձևերինը, ժանրերինը և մետականացման եղանակներինը: Հիշատակելի է նաև այն փաստը, որ մետականացման եղանակների և խոսույթների ձևերի հետազոտվածությունը դեռևս չի դարձել գիտական լուրջ ուսումնասիրության առարկա: Հավելենք, որ մետապատումին²⁰ և մետանկարագրությանը²¹ նվիրված նորագույն աշխատանքները համակարգման ասպարեզում իրենցից ներկայացնում են երկու նոր փորձեր, սակայն խոսույթի մյուս ձևերը՝ մետափաստարկումը և եղանակները²², դեռևս կարոտ են տեսական մշակումների:

Գործառույթային պատմության նկատառումով կարելի է ելնել այն փաստից, որ ինչպես պատրանքագերծ, այնպես էլ պատրանքաստեղծ մետականացման հնարները, սկսած իրենց առաջացման պահից, հատուկ են եղել մտացածին տեքստերին: Պատմողի մեկնաբանությունները կարող են ընթերցողի ուշադրությունը դարձնել, օրինակ, տեքստի հնարովի բնույթի վրա և դրանով իսկ դառնալ պատրանքագերծ: Պատմողի մեկնաբանություններում մետապատումային բանավոր տարրերը, սակայն, կարող են ուժեղացնել պատումի գործընթացի պատրանքը և տեքստը «վավերացնել» որպես պատմվածք: Ընդ որում, պատրանքագերծ ու պատրանքաստեղծ բևեռների միջև մետականացման հնարները կարող են ցույց տալ պատրանքագերծման և պատրանքաստեղծման տարբեր աստիճաններ:

Մետականացման հնարները մեծ մասամբ բազմակի կողավորված են և իրենց գործառույթային ներուժի առումով ունեն երկակի բնույթ, քանի որ պատրանքագերծման ազդեցության ներուժը բնորոշ է անգամ պատրանքաստեղծ մետահորինվածքին: Պատրանքագերծ և պատրանքաստեղծ մետականացման հնարների ազդեցության ներուժի աստիճանը կախված է շատ գործոններից, այսպես, օրինակ, տեքստում մետականացման հնարների տեղակայումից, մետականացման հնարները եզրային դիրքում

20 Հմտ. Nünning, Ansgar: Metanarration als Lakue der Erzähltheorie. Definition und Grundriß einer Funktionsgeschichte metanarrativer Erzähläußerungen. In: "Arbeiten aus Anglistik und Amerikanistik 26" (2001a), S. 125-164, Mimesis des Erzählens: Prolegomena zu einer Werkungsästhetik, Typologie und Funktionsgeschichte des Akts des Erzählens und der Metanarration. In: Jörg Helbig (Hrsg.): "Erzählen und Erzähltheorie im 20. Jahrhundert". Festschrift für Wilhelm Fieger. Heidelberg: Winter2001b, S. 13-47, On Metanarrative. Towards a Definition, a Typology and an Outline of the Functions of Metanarrative Commentary. In: John Pier (Hrsg.): "The Dynamics of Narrative Form. Studies in Anglo-American Narratology" (Narratologia 4). Berlin/New York: de Gruyter 2004, S. 11-57.

21 Հմտ. Nünning, Ansgar, Distinguishing and Historicizing Different Kinds of (Meta-) Descriptions: Forms and Functions of Description in Realist, Modernist, and Postmodernist Novels. In: Walter Bernhardt/Werner Wolf (Hrsg.): "Description in Literature and Other Media". Amsterdam: Rodopi 2006

22 Օրինակ՝ Հոգեր Կոռտիսը դրաման և պատմվածքը բնութագրում է որպես «պոստ ժանր», այլ կերպ՝ պատահածի պատկերման եղանակ (հմտ. Korthals, Holger: Zwischen Drama und Erzählung. Ein Beitrag zur Theorie geschehensdarstellender Literatur. Berlin: Erich Schmidt 2003).

պատմվածքի ներածության մեջ, ունեն շատ ավելի բարձր պատրանքաստեղծ գործառական ներուժ, քան կենտրոնական դիրքի մետականացումները, որոնք արգելում են պատումի հոսքը և դրանով իսկ առաջին պլան են մղում պատումի նարրատիվ կառուցվածքը:

Մետականացման ներքին ձևերի տիպաբանության, պատրանքագերծ և պատրանքաստեղծ բևեռների միջև գեղագիտական ազդեցություն կրող գործառական ներուժի վերաբերյալ ցանկանում ենք հիշատակել Վերներ Վոլֆի՝ պատմողական արվեստում գեղագիտական պատրանքին ու պատրանքի խաթարմանն առնչվող համակողմանի ուսումնասիրությունը²³: Վ. Վոլֆի կողմից առաջադրված գործոնների համաձայն²⁴ մետականացման այնպիսի հնարներ, ինչպիսիք են պատմողի մեկնաբանությունները, միջտեքստային կապերը, *mise en abyme*-ը («պատմվածք պատմվածքի մեջ»), բեկումները և ժանրային պայմանականություններով լի ծաղրերգական խաղերը, արվեստի ոլորտների ու ժանրերի փոփոխումը, տեքստային հակասությունները, մետալեպար, ինչպես նաև հարատեքստերը կարող են ուսումնասիրվել կոնկրետ տեքստային օրինակով՝ ըստ իրենց գեղագիտական ազդեցության գործոնների:

Հենց էքսպլիցիտ մետականացման տարրերը, որոնք ներկայացվում են պատումի (*telling*) եղանակով և կապ են հաստատում ընկալողի հետ, կարող են ստանձնել պատրանքաստեղծ մի շարք գործառույթներ՝ իսկություն փաստող, կապակցվածություն հաստատող, մեմոտեխնիկական, հաղորդակցական, ինչպես նաև դիդակտիկ գործառույթներ: Տեքստային և արվեստի ոլորտին բնորոշ տարրերի վերաբերյալ էքսպլիցիտ կամ իմպլիցիտ իրազեկումը կամ ընդգծումը ևս կարող է իրականացնել ընդհանուր հետաքրքրություն առաջացնող գործառույթ: Հիշատակված մետականացման հնարների գործառույթային բոլոր պոտենցիալները կարող են հանդես գալ նաև ընկալողների ուշադրությունը շեղող գործառույթի ներքո. այդ դեպքում դրանք դուրս են գալիս զուտ ներտեքստային կառուցողական գործառույթների սահմաններից²⁵:

Մետականացման պատկերման եղանակները, անտարակույս, կարող են պարունակել պատրանքագերծ ազդեցության ներուժ՝ պոետիկական և մետամտացածին կամ մետանարատիվ ու մետալեզվական ինքնախորհրդածումների միջոցով հղելով տեքստի մտացածին և կառուցված լինելու բնույթին:

Մետականացման տարրերի գործառական ներուժը, ըստ Ասսգար Նյունինգի, կարելի է պատկերել պատրանքագերծ և պատրանքաստեղծ բևեռների միջև ընկած սանդղակով²⁶.


23 Հմմտ. նախևառաջ Wolf , Werer., ebd, S. 220 ff.

24 Որպես առանձին մետականացման տիպերի գեղագիտական ազդեցության ֆունկցիոնալիզացման գործոններ՝ Վ. Վոլֆը (1993, S. 257) անվանում է 1. համոզությունն ու փոխհատուցման մեխանիզմները, 2. դիրքը տեքստում, այլ կերպ՝ ներառումը կոնտեքստում, 3. հաճախականությունը, 4. նշույթավորումը 5. կիրառման ոլորտը և 6. մետականացման հնարների բովանդակային միտումը:

25 Միջտեքստային ձևերը գործառության աստիճանավորման առումով զբաղեցնում են միջանկյալ տեղ. այլ տեքստերին ու արվեստի ոլորտներին հղումը կարող է ունենալ ինչպես հաստատող, այնպես էլ ծաղրերգական, քննադատական և մետաֆիլցիոնալ ազդեցություն:

26 Հմմտ. A. Nünning, 2004, S. 40.

Մետականացման պատկերման եղանակների հնարավոր գործառույթային ներուժի (այսուհետ՝ գն) աստիճանավորում



Պատրանքաստեղծում Պատրանքազերծում

Պատրանքաստեղծ և պատրանքազերծ գործառույթային պոտենցիալները տարանջատելու համար սկզբունքորեն հարկ է սահմանազատել պատմողականի և գործողության պատրանքների միջև. առաջինը կարելի է բնորոշել՝ տարանջատելով գործողության պատրանքին առնչվող գերիշխող ավանդությունից²⁷: Վերջինս ռեալիստական ոճով ստեղծում է կյանքին մոտ իրական աշխարհ: Իսկ այն տեքստերում, որոնցում գերազանցում է պատմողական պատրանքը, իր հերթին գերիշխում է զրույցը պատմողական ատյանի և մտացածին հասցեատիրոջ միջև: Նման տեքստերում գործող անձանց հարթության վրա գործողության փոխարեն նկարագրվում է պատումի ակտը: Պատմողը հանդես է գալիս որպես անձնավորված խոսող, որը դիմում է մտացածին ընթերցողին. այստեղից էլ հենց առաջանում է պատումի պատրանքը, այսինքն՝ զրույցը պատմողական ատյանի և մտացածին ընթերցողի միջև, այլ խոսքով՝ երկխոսության տպավորություն ստեղծող մենախոսության: Մետականացման այնպիսի տարրեր, ինչպիսիք են մետապատումային և մետանկարագրողական հնարները, ընդ որում, կարող են նպաստել պատմողական պատրանքի առաջացմանն ու խթանմանը և միաժամանակ տևականորեն խանգարել գործողության պատրանքին:

Գործողության պատրանքի դրվագային խաթարման և հարատև բեկման ու պատմողական պատրանքի առաջացման և խթանման բևեռների միջև ընկած մետականացման տարրերը կարող են ունենալ պատրանքաստեղծ ու պատրանքազերծ աստիճաններ: Այսպես, օրինակ, գործողության պատրանքի հաշվին պատմողի մեկնաբանությունները ընթերցողի ուշադրությունը կարող են ուղղել տեքստի մտացածին բնույթի վրա: Եթե

27 Sönü Nünning, Ansgar, 2004, 2001a: On Metanarrative. Towards a Definition, a Typology and an Outline of the Functions of Metanarrative Commentary. In: John Pier (Hrsg.), ebd.

պատմողի մեկնաբանությունները պարունակում են բանավոր խոսքին բնորոշ տարրեր, ապա վերջիններս կարող են ուժեղացնել պատումի գործընթացի պատրանքը և տեքստը վավերացնել որպես հյուսվածք: Ինչպես արդեն նշվեց, մետականացման հնարները մեծ մասամբ բազմակի կողավորված են, քանի որ պատմվածի իսկությունը հաստատող, գործողության պատրանք ստեղծող մետականացումները ներառում են նաև պատրանքազերծ ազդեցություն ունեցող պոտենցիալ՝ մշտապես հղելով տեքստին՝ որպես մի կառույցի:

Ինքնախորհրդածող պատումի, այլ կերպ՝ մետահորինվածքի և պատրանքազերծման կամ բեկման կապին անդրադարձող²⁸ գեղագիտական ազդեցության հարցի վերաբերյալ բացը մինչ օրս մետականացման ձևերի գործառնություններն են: Բանն այն է, որ ինքնախորհրդածող պատկերման այնպիսի նշանակալի ձևեր ու ավանդույթներ, ասենք, վաղ ժամանակակյան ինքնաանդրադարձի հասկացույթը կամ ժամանակակյան հեգնանքը, ինչպես նաև ժանրային և արվեստի ձևերին բնորոշ մետականացման կամ բազմապատկման դրսևորման շատ այլ ձևեր դուրս են գալիս էպիկական օտարացման ու պատրանքի բեկման գործառնությունների սահմաններից: Խնդիրը նաև այն է, որ հետազոտողները մինչ օրս իրենց ուշադրությունը կենտրոնացրել են պոստմոդեռնիստական գրականության վրա՝ բաց թողնելով այս երևույթի պատմական չափումը:

Ավանդական ձևերի զարգացման և նոր ժանրերի առաջացման հարցում ամենից առաջ կարող է զգալի դեր խաղալ մետականացման պոետիկական գործառնության պոտենցիալը²⁹:

Մետահնարների առնչությունը պոստմոդեռնիզմի, ժամանակակյան և մնացած այն դարաշրջանների հետ, որոնք առավել հակված են գրական փորձերի, մատնանշում է իրենց՝ բոլոր ժամանակներին բնորոշ գործառնության կենտրոնական պոտենցիալը. մետականացման պատկերման եղանակները մի կողմից՝ կարող են ընկալվել որպես արվեստագետի ստեղծագործական ճգնաժամի գիտակցության արտահայտում, մասնավորապես, ըստ Ջոն Բարտի³⁰, պոստմոդեռնիզմով չսահմանվափակվող «սպառված գրականությանը» բնորոշ գիծ (Literature of Exhaustion, Literatur der Erschöpfung), որը հաճախ ծաղրերգական կամ պատրանքազերծ մետականացման հնարների միջոցով է պատկերում ժամանակավրեպ ժանրային նմուշների և որպես հին դիտարկվող գեղարվեստական պատկերման ձևերի պակասը կամ «սպառվածությունը»: Մյուս կողմից՝ մետականացումը, կրկին Ջ. Բարտի համալրման գրականության (Literature of Replenishment,

28 Տե՛ս **Wolf, Werner** 1993, ebd.

29 Հմտ. Ժամանակակից անգլիական վեպի վերաբերյալ Վերա Նյունինգը (**Vera Nünning**: Parodie, Metafiktion und Transformation des realistischen Erzählens im englischen Roman von 1960 bis 1980. Die "experimentellen" Realisten Doris Lessing, John Fowels, David Lodge und B.S. Johnson. In: dies/ **Ansgar Nünning** (Hrsg.): Klassiker und Strömungen des englischen Romans im 20. Jahrhundert. Festschrift zum 65. Geburtstag von Gerhard Hafner. Trier: WVT 2000, S. 87-115, S. 111.) փաստում է, որ «[չի կարող] կասկած առաջանալ այն հարցում, որ ծաղրերգական և մետաֆիկցիոնալ գործերը [...] զգալի ներդրում են ունեցել այս ժանրի հետագա զարգացման հարցում»: Ծաղրերգության նշանակությունը ժանրի զարգացման հարցում կարելի է հետևել՝ սկսած Միխայիլ Բախտինից (**Bachtin, Michail**: The Dialogic Imagination. Four Essays. Hrsg. u. übers. v. Michael Holquist. Austin: University of Texas Press 1981, S. 309) մինչև ռուս ֆորմալիստները: Նաև Վիլֆրիդ Ֆլակն է անդրադառնում այս փաստին (**Winfried Fluck**: Das kulturelle Imaginäre. Eine Funktionsgeschichte des amerikanischen Romans 1790-1900. Frankfurt a. M.: Suhrkamp 1997).

30 Տե՛ս **Barth, John**: The Literature of Exhaustion. In: "The Atlantic Monthly 220" (1967), S. 9-34:

Nachschubliteratur) իմաստով, կարող է աջակցել նոր պատկերման միջոցների զարգացմանն այն առումով, որ մետականացման տարբեր հնարներով բարձրացվում են պոետիկական նոր հարցադրումներ, և դրանով իսկ նոր թափ է առնում արվեստագետի ստեղծագործական պոտենցիալը՝ աղերսված ավանդույթի ու նորարարական փորձերի նոր կապերին:

Մինչ օրս ուսումնասիրված չեն նորարարական պատմողական ձևերն ու պարադոքսային սահմանային այնպիսի անցումներ, ինչպիսիք են մետալեպսները, mises en abyme-ը ու մետապատումի, մետանկարագրության արտահայտման ձևերը, այդ թվում նաև ծաղրերգական պատկերման հնարների համակարգային նկարագրողական մոդելները: Այն հարցի պատասխանը, թե երբ և առհասարակ առկա է արդյոք «ինքնաանդրադարձր գրականության մեջ»³¹ կամ «ինքնաանդրադարձող գրականությունը»³², կարելի է պարզել միայն այն ժամանակ, երբ գրականության ինքնաանդրադարձի ձևերի և դրսևորումների վերաբերյալ կզարգացվեն ավելի տարբերակված նկարագրողական մոդելներ:

Չնայած առանձին հեղինակներին նվիրված որոշ առկա ուսումնասիրություններին՝ այնուհետև զգալի է տեսական ու եզրույթավորված, կիրառական բնույթի ուսումնասիրությունների պակասը, որը վերաբերում է ինչպես ռեալիստական, մոդեռնիստական և էքսպերիմենտալ գրականության դասականներին, այնպես էլ ժամանակակից արվեստի բազմաթիվ ձևերին: Այդ իսկ պատճառով խիստ արդիական է դառնում մի կողմից՝ տեսության և սահմանումների ձևակերպման, մյուս կողմից՝ պարզ վերլուծության և պատմողական տեքստերի մեկնաբանության հարաբերակցության խնդիրը:

Ամենամեծ բացթողումը թերևս ինքնախորհրդածման երևույթների գրականության պատմությանը վերաբերող չափումն ու դրանց պատմական փոփոխականությունն է: Ըստ Միխայել Շեֆելի՝ հետազոտությունը «մինչ այժմ չի զարգացրել պատմական որևէ համոզիչ հեռանկարային մոտեցում»³³. զանց են առնվել գրականության պատմության դիտանկյունից կենտրոնական ինքնախորհրդածման երևույթների պատկերումները: Հետևաբար դեռևս բացակայում են մետականացման ձևերի և մետաժանրերի տարբեր պատմությունների վերլուծությունները, ընդ որում, ոչ միայն անգլիական և ամերիկյան գրականության, այլև ուրիշ ազգային գրականությունների:

Այսպես, օրինակ, առկա ընդհանրական դրույթը, որի համաձայն՝ Բեքթի եռագրությունը նշանավորում է «մետագրականության տրամաբանական վերջնակետը»³⁴, քննության կարող է դիմանալ միայն այն ժամանակ, երբ մետագրականության զարգացման ուղղությամբ կկատարվեն գրականության պատմությանն առնչվող հիմնավոր և բազմակողմանի հետազոտություններ: Դեռևս չհետազոտված են մնացել նաև պատմական և մշակութային առումով փոփոխվող այն գործառույթները, որոնք կարող

31 Breuer, Rolf: Rückbezüglichkeit in der Literatur. In: Paul Watzwick (Hrsg.): "Die erfundene Wirklichkeit. Wie wissen wir, was wir zu wissen glauben? Beiträge zum Konstruktivismus" . München/Zürich: Piper 1984[1981], S.150. 32 Ebd.

33 Ebd, S. 5.

34 Breuer, Rolf, ebd, S.150.

են իրականացնել ինքնախորհրդածող պատկերման ձևերը, ինչպես նաև դրանց երկխոսական հարաբերությունները այլ ժանրերի, արվեստի ձևերի ու խոսույթների հետ: Եվ, ի վերջո, մշակութային տարբեր համատեքստերում բացակայում է մետականացման պատկերման հնարների գործանական պոտենցիալների համակողմանի վերլուծությունը:

2. Մետականացում և վերաբերություն

Եվ այսպես, «մետականացում» բառը գրականության և արվեստի այլ ոլորտներում ենթադրում է մետամակարդակի ներգրավում որևէ ստեղծագործության, ժանրի կամ մեկ այլ բնագավառում, որից ելնելով՝ մետավերաբերական առումով հղում է կատարվում մեկ ուրիշ ստեղծագործության, ժանրի կամ որևէ արվեստի ոլորտի տարրերին կամ ասպեկտներին: Այն տեղի է ունենում աչքի ընկնող կամ առնվազն ակնարկված արտահայտության, մեկնաբանության կամ այլ միջոցներով, որոնք ենթադրում են «գրական գիտակցություն»:

Մետականացման բնութագրման համար գոյություն ունեն երեք չափանիշեր.

ա. վերաբերության առկայությունը կամ նրա ստեղծումը **նույն համակարգի ներսում**.

բ. այս համակարգին բնորոշ վերաբերության **արտահայտության բնույթը**.

գ. իմպլիցիտ կամ էքսպլիցիտ դարձրած **նշանային համակարգի գիտակցության** առկայությունը. այն ներառում է նաև **մակարդակների տարբերակման** առկայություն, ասել է թե՛ օբյեկտիվ և մետամակարդակի տրամաբանական տարբերությունը:

Մետականացումը, այսպիսով, կարելի է դիտարկել որպես վերաբերության մի հատուկ դեպք: Հետևաբար մետականացումը հարկ է ուսումնասիրել վերաբերությունների տեսակների համակարգում: Ընդ որում, ուսումնասիրվող երկերը դիտարկվում են որպես նշանային համակարգեր, մասնավորապես համակարգի արդիականացումներ, որոնց վերաբերությունը սկզբունքորեն կարող է ընթանալ երկու ուղղություններով. ամենից առաջ խոսքը հետերովերաբերության մասին է: Սա արվեստի տարբեր բնագավառներում ամենահաճախ օգտագործվող վերաբերության տարբերակն է, որը մեզ կարող է տեղափոխել գեղագիտական պատրանքի տիրույթ: Հետերովերաբերությանը հատկանշական է այն, որ նշանային համակարգից կամ նրա արդիականացումից դուրս հղում է կատարվում կենդանի աշխարհին կամ երևակայական իրականությանը:

Ի տարբերություն հետերովերաբերությանը՝ **ինքնավերաբերությունը**³⁵ գրականության մեջ կամ արվեստի այլ ձևերում ցույց է տալիս այնպիսի հնարավոր հղումներ, որոնք կարող են առաջանալ գրականության կամ արվեստի համակարգերում, ընդ որում, երկու եղանակով՝ նախնառաջ, երբ այս համակարգի տարրերը կամ համակարգը ընդհանուր առմամբ

35 Այսուհետ «ինքնավերաբերություն» եզրույթը օգտագործվում է որպես գերմաներենում առկա «Selbst- bzw. Autoreferenz-/referenzialität» եզրույթների հոմանիշ:

հղում են իրենք իրենց, կամ երբ համակարգի մի տարր հղում է կատարում նույն համակարգի մեկ այլ նման կամ նույնանուն բաղադրիչի:

Ինչպես ցույց է տալիս ինքնավերաբերվող հետևյալ նախադասությունը՝ «Սա գերմանական նախադասություն է», ինքնավերաբերությունը հաճախ հանդես է գալիս հետերովերաբերության հետ մեկտեղ, որը տվյալ դեպքում «գերմանական» բառն է: Ինչպես հաճախ հանդիպում է տիպաբանական տարբերակներում, նաև հետերո- և ինքնավերաբերության (այդ թվում մետականացման) դեպքերում հարկ է ելնել ոչ թե դասական հակադրությունից, այլ երկբևեռային սանդղակից, որը պարունակում է ավելի կամ պակաս անցումային և խառը տիպի ձևեր:

Ինքնավերաբերությունը կամ ինքնավերաբերվածությունը կարող է, այսպիսով, սահմանվել միայն ձևական-համակարգային նկատառումով և արտահայտվել տարբեր երևույթներով: Հենվելով Միխայել Շեֆելի տարբերակման վրա³⁶, որն ամենից առաջ կիրառելի է գործառնության սահմանված մետականացման դեպքում, կարելի է առանձնացնել ևս երկու հիմնական ձև՝ զուտ համակարգին ներակա **հղում** առանց ինքնավերաբերվող արտահայտության ներառման կամ նրան՝ որպես թեմա անդրադառնալուն, և երկրորդը՝ որպես համակարգին ներակա երևույթներին հղված նշանակություն (որին նաև դասվում է մետականացումը):

Առաջին տարատեսակը իրենից մի անեզր դաշտ է ներկայացնում. այն ընդգրկում է սիմվոլիկ ինքնավերաբերություն, ընդ որում, ինչպես ստեղծագործության ներքո (օրինակ՝ արտահայտված քերականական ինքնավերաբերվածությանը՝ անդրադարձ դերանվան միջոցով), այնպես էլ ստեղծագործությունից դուրս (օրինակ՝ արտահայտված միջտեքստային նախատեքստերի անվանմամբ): Համակարգի ներսում գործող հղումներից են նաև պատկերանշանային վերաբերությունները, այսինքն՝ այն վերաբերությունները, որոնք առաջանում են նմանության հիմքի վրա, օրինակ, «արտացոլումը», կրկնությունը կամ տարատեսակը, որն ասենք առկա է *mise en abyme*-ի մեջ, մի բանաստեղծության նույն հանգեում կամ տեքստի ու նախատեքստի հարաբերություններում՝ միջտեքստային ցիտման դեպքում³⁷: Այստեղ (օրինակ՝ հանգերի և այլ մետրիկ տարրերի կրկնողության մեջ) կարելի է գտնել մասամբ այնպիսի հնարներ, որոնք Ռոման Յակոբսոնը նկարագրում է որպես «պոետիկական գործառնություն»³⁸:

Բացի այդ՝ ինքնավերաբերվող հղումն ընդգրկում է նաև Ռ. Յակոբսոնի «պոետիկական գործառնություն» հետ կապված առաջին պլան մոլովոլ այլ հնարներ, ասենք, շեղելու միջոցով ինքն իրեն հղելը. դրա արդյունքում համակարգի որևէ տարր իր վրա է ուշադրությունը բևեռում որպես այլ (*different*) մեկի: Թեև ինքն իրեն հղելու հնարը ընկալողից պահանջում է

36 Այստեղ «արտացոլումը» (“Spiegelung”) ընկալվում է որպես «ինքնահայեցման» (“*Sich-selbst-Betrachten*”) հակահիշ, ի դեպ, ընկալված որպես «ինքնախորհրդածում» (“*Selbstreflexion*”) /Հմնտ. **Scheffel**, 1997, S. 48, 54/.

37 Այս բոլոր դեպքերում առկա է պատկերանշանություն, այսինքն՝ ոչ միայն որպես նմանություն նշանակիչի և նշանակալի միջև, (այն արտահայտված է Մ. Նենի և Օ. Ֆիշերի աշխատության անվանման ձևակերպման մեջ՝ “*Form Miming Meaning*” (**Nänny, Max/Olga Fischer** (Hrsg.): *Form Miming Meaning. Iconicity in Language and Literature*. Amsterdam: John Benjamins 1999), այլ նաև որպես նմանություն առանձին նշանակիչների միջև (“*form miming form*”), ինչպես նաև տարբեր նշանակալների (“*meaning miming meaning*”). խոսքն այստեղ մասնավորապես «փոխաբերական պատկերանշանության» մասին է:

38 **Jakobson, Roman**: *Closing Statement. Linguistics and Poetics*. In: **Thomas A. Sebeok** (Hrsg.): “*Style in Language*. Cambridge”, MA: MIT Press 1960, S. 356-377.

որոշակի ըմբռնում, սակայն դա նույնական չէ ինքնավերաբերվող **արտահայտության** հետ: Այստեղ խոսքն ինքնավերաբերվող **նշանակության** մասին է: Հենց այստեղ է առաջանում մտադրված օգտագործված (կամ որպես մտադրված ընկալված) **ինքնավերաբերություն** արտահայտության մեջ համակարգի որևէ տարրի նկատմամբ՝ լինի դա փաստացի, պարզ խոսքային արտահայտության, թե պատկերման կամ ներառման միջոցով: Նման ինքնավերաբերվող նշանակությունը կրում է իմաստային բնույթ. այն հանգեցնում է սեփական համակարգի տարրերի մասին խորհելու գործընթացին, ընդ որում, այդ նույն համակարգի տարրերի միջոցով և դրանով իսկ՝ **ինքնախորհրդածմանը**: Վերջինս կարող է օգտվել ինքնավերաբերվող հղումների հնարներից, օրինակ՝ “mise en abyme”-ից, սակայն նաև կարող է առաջացնել անկախ այլ հնարներ: Դրա միջոցով ինքնավերաբերվող հղումների ու ինքնավերաբերվող նշանակության, այսպիսով՝ ինքնախորհրդածման միջև սահմանները առանձին դեպքերում կարող են հանդես գալ բավական սահուն³⁹:

«Զուտ» ինքնավերաբերության էֆեկտը այնքան է տարածված, որ ինքնավերաբերությունը ինքնախորհրդածումից տարանջատելը դառնում է իմաստալից, ընդ որում, այն առաջինից առավել է, մասնավորապես ճանաչողական ակտիվության դրսևորման պատճառով՝ որպես մետականացումից տարբերող կարևորագույն հատկություն⁴⁰: Այս հատկանիշը մետականացման երևույթների դրսևորման ժամանակ ընկալողի հատուկ դերի համար դառնում է ցուցիչ, քանի որ մետառեֆլեքսիան պետք է կատարվի դրանց ներսում, որպեսզի մետականացումը տեղի ունենա: Վերջինս, այսպիսով, ինչպես շատ գրական երևույթներ, իրենից ներկայացնում է երկբևեռային երևույթ. այն վերաբերում է ինչպես ստեղծագործությանը, այսինքն՝ տեքստին, այնպես էլ ընկալողի ընկալմանն ու նրա հետ համագործակցությանը:

Ինքնառեֆլեքսիվ արտահայտությունների օբյեկտների առումով, որոնք առաջանում են ստեղծագործության և ընկալողի փոխազդեցության արդյունքում, Մ. Շեֆելը կատարում է մի կարևոր դիտարկում. նա տարբերակում է ոչ մետավերաբերական և մետավերաբերական առարկաները: Առաջինը, որին Մ. Շեֆելը դասում է «պատմվածի զննումը[...]», ստեղծվում է պատմողական առյանի (ինստանցիայի) միջոցով⁴¹, օրինակ, այն դեպքերում, երբ պատմողը դասում է վեպի հերոսների գործողության մասին, կարծես նրանք կենդանի մարդիկ լինեն և ոչ թե անիրական նշանային համակարգի մի մաս: Սակայն մեզ հետաքրքրում է երկրորդը, մասնավորապես մետավերաբերական ինքնառեֆլեքսիվությունը կամ ավելի հակիրձ՝ «մետավերաբերությունը», այլ կերպ՝ «մետառեֆլեքսիվությունը»:

Ի տարբերություն ոչ մետավերաբերական ինքնախորհրդածմանը՝ մե-

39 Սա առնչվում է առաջին պլան մղվող ինքնավերաբերական հնարներին, որոնք առավելապես օգտագործվում են հետերովերաբերական նպատակներով (օրինակ՝ բաղաձայնայնությոն նշանակության համարժեքության ընդգծման համար), ընդ որում, մետավերաբերական նպատակներով:

40 Մետականացումը այս իմաստով մոտ է Ռ. Յակոբսոնի մետալեզվական գործառնություն, քանի որ վերջինիս բնորոշ է լեզվի մասին արտահայտություններ անելը: Ի դեպ, նշենք, որ Յակոբսոնը առանձնացնում է լեզվական ինքնավերաբերական երեք գործառնություն՝ կապ հաստատող, մետալեզվական և պոետիկական տե՛ն **Ռ. Յակոբսոն**, նույն տեղում [1960].

41 **Scheffel, Michael**, ebd., S. 57.

տառեֆլեքսիաները թե՛ ստեղծագործության և թե՛ ընկալողի մեջ ենթադրում են համակարգի գիտակցում. դրանք այդ գիտակցումը ուժեղացնում կամ ստեղծում են նույն կերպ, ինչպես արտահայտության և օբյեկտի հարթությունների տարբերության ենթադրությունը⁴², քանի որ, ըստ իրենց բնույթի, պարունակում են արտահայտություններ համակարգի մասին: Մետահղումները, այսպիսով, այլ գործառույթների հետ մեկտեղ ևս իրականացնում են մի տիպիկ գործառույթ. ինքնավերաբերությունն ընկալողին դրդում է հանգելու խորհրդածումների կենտրոնում պահվող առարկայի «մտացածին լինելու» գաղափարին կամ էլ այդ երևույթը դարձնում է բովանդակության առարկա, ընդ որում, «մտացածինը»՝ որպես մետավերաբերական ռեֆլեքսիայի բովանդակություն, մշտապես հղում է այնպիսի ասպեկտների, որոնք առնչվում են գրական ստեղծագործության կամ արվեստի այլ գործերի արհեստականությանը կամ նշանային բնույթին: «Մտացածինը», որը գոյաբանական իմաստով ընկալվում է որպես ոչ իսկական, սարքված, Վ. Վոլֆը պատմողական արվեստի նկատառումով, անվանում է **fictio**⁴³: Բացի այդ՝ մտացածինը (“Fiktion”) կարող է հղել ինչպես միայն կեղծված, այնպես էլ իրական վերաբերությանը: Ի տարբերություն **fictio**-ի չափմանը, որը հենվում է «բնական»՝ ընդդեմ «սարքված»-ի հակադրության վրա, Վոլֆը մտացածինի **վերաբերական իմաստը** (դրա հիմքում ընկած է «հորինված»՝ ընդդեմ «իրական» հակադրությունը) անվանում է **fictum**-չափում⁴⁴:

Այսպես, Յոհաննես Գումպի «Ինքնադիմանկարում» (1646, Ֆլորենցիա, Ուֆֆիցիա)⁴⁵ պատկերված է **fictio**-մետականացում, ուրիշ խոսքով՝ նոր պատկերվող պատկեր պատկերի մեջ: **Fictum**-չափումն այստեղ ևս հանդես է գալիս *mise en abyme* հարթության միջոցով, ի դեպ որպես մտացածին բնույթի ժխտում, քանի որ ճանաչելի է դառնում հայելու և նկարի մեջ պատկերված դիմանկարի համեմատությունը՝ որպես նույնի «արտացոլում», մասնավորապես «իրական» նկարչի դեմքի պատկերված աշխարհում: Այս նկարի և դրանում ներառված արվեստի ընկալման վերաբերյալ **fictum**-չափումից կարելի է հետևեցնել գեղանկարչության ընդօրինակող ներուժի հաստատումը:

Գրականագիտության մեջ «մետավերաբերության» փոխարեն, որը պատկերված է վերոնշյալ նկարում, խոսքը հաճախ «մետատեքստուալության» մասին է, ընդ որում, այն ժամանակ, երբ շեշտադրվում են արվեստի տարբեր ձևերին հատուկ մետատրակները: Այս առումով Վ. Վոլֆը մետատեքստուալության հետ միասին առաջարկում է գործածել նաև «մետառլորտայնություն» սահմանումը:

Այսպիսով, Վ. Վոլֆը մետականացումը կամ ոլորտային վերաբերությունների միկրոկառուցվածքի ներքո բնորոշվող մետավերաբերությունը պատկերում է հետևյալ կերպ.


42 Մ. Շեֆելի ոչ մետականացված ինքնախորհրդածման սահմանմանը կհամապատասխաներ արդեն իսկ «ա կերպարի»՝ «բ կերպարի» մասին պատմված մետապատումային մեկնաբանությունը: Այս գործընթացը, սակայն, առնվազն պատումային դիտանկյունից, տեղի կունենար նույն՝ մետադիեթեզիկ մակարդակի վրա:

43 Տե՛ս **Wolf, Werner**, ebd., S. 38:

44 Ebd., S. 39.

45 **Johannes Gump**: Selbstporträt (1646, Florenz, Uffizien)

Վերաբերությունը գրականության մեջ և արվեստի այլ ձևերում



Պատկ. 1. Վերաբերությունը գրականության մեջ և արվեստի այլ ձևերում

Կարևոր է, որ մետավերաբերության (կամ մետառեֆլեքսիվության⁴⁶) վերոնշյալ բնորոշման միջոցով կարող են նույնացվել առաջնային առանձին երևույթներ. Խոսքը որոշ **տեքստերում** կամ **այլ գործերում** առանձին **մետատարրերի կամ մետաարտահայտությունների նույնացման** մասին է: Արվեստի պատմության մեջ առկա առանձին երևույթներից կարելի է տարանջատել երկու՝ միմյանց հետ կապակցված երևույթներ, որոնք ինչպես պատմական, այնպես էլ համակարգային նկատառումով ուշաբժան են: Խոսքը «մետաստեղծագործությունների», հատկապես մետատեքստերի և մյուս կողմից՝ այլ մետաժանրերի՝ որպես կոնկրետ արվեստի ձևերի, մասին է. մետակենսագրության, մետադրամայի, մետամտացածինի, մետաֆիլմի և այլն: Այս ամենը մետաժանրեր են, որոնց պատկանող «մետագործերը» ակնառու են մետավերաբերական տարրերի և արտահայտությունների, այլ խոսքով՝ մետավերաբերության գերներկայացվածությամբ: Իրենց առնչությամբ կարող է օգտագործվել «արվեստի ձևերին բնորոշ մետաժանրեր» եզրույթը: Ստորադաս եզրույթները, այսինքն՝ առանձին ժանրերը, իրենցից ներկայացնում են բաց հարացույց: Դրանք կարող են զանազանվել վեր և ստորադաս ժանրերով⁴⁷, սակայն զուրկ են հետագա համակարգավածությունից և այդ իսկ պատճառով կարող են


46 Այս երկու սահմանումները մետավերաբերության հետ միասին կարող են օգտագործվել նաև որպես հոմանիշեր, քանի որ յուրաքանչյուր ինքնախորհրդածում ընդգրկում է նաև ինքնավերաբերություն:

47 Այսպես, օրինակ, «մետագրականությունը», այսինքն՝ այն գրականությունը, որը ներթափանցված է մետատեքստուալությամբ, կարող է դիտարկվել որպես վերադաս սահմանում մետամտացածինի, մետադրամայի և մետաքնարերգության համար այնպես, ինչպես «մետաարվեստը»՝ որպես մետագեղանկարչության, մետապլաստիկայի և այլնի սեռանուն:

դիտվել որպես ժամանակավոր երևույթներ: Ստորև ներկայացված 2-րդ պատկերում կարելի է նկատել այն, որ այստեղ համակարգումը տեղի է ունեցել ըստ արվեստի ձևերի, մասնավորապես՝ հիմնական ժանրերի: Ընդ որում, հարկ է նշել այն, որ «մետահորինվածքը» այստեղ օգտագործված է որպես պատմողական արվեստի բոլոր մետաձևերին բնորոշ սահմանում:

Երբ մենք արվեստի ձևերը և ժանրերը դասում ենք ստորակարգային ավելի բարձր հարթության վրա, ապա «մետապատումը», «մետանկարագրությունը» (այդ թվում նաև «մետափաստարկումը» ու «մետալեզվականը» և այլն) իմաստային առումով վերածվում են բնորոշված մետահորինվածքի, մետադրամայի, մետաֆիլմի, ինչպես նաև ոչ մտացածին խոսքային ժանրերի ստորադաս ձևերի: Սակայն եթե մենք, դրան հակառակ, ստորակարգային առումով ավելի բարձր ենք դասում խոսույթի ձևերը, ապա արվեստի պարտադիր ստորադաս ձևեր են դառնում պատմողական արվեստը, «մտացածինը», դրաման և այլն: Ընդ որում, Վոլֆն իր բաժանումը կատարում է հոգուտ արվեստի ձևերի՝ որպես դասակարգման չափանիշի:

Արվեստի ձևերին բնորոշ մետաժանրեր



Պատ. 2.: Արվեստի ձևերին բնորոշ մետա (ստորադաս) ժանրեր

Որպես հետևություն, այսպիսով, կարող ենք բխեցնել դասակարգման հետևյալ սահմանումները, որոնք ստորև՝ 3-րդ պատկերում ևս մեկ անգամ նկարագրվում են սխեմատիկ կերպով:

Ընդհանուր դասակարգման սահմանումներ մետաուլորտում

Մետականացում. տրանսսերոդ և տրանսուլորտային երևույթ, որը առաջանում է նշանային համակարգի (ստեղծագործության, ժանրի կամ ոլորտի) մեջ մետամակարդակի ներթափանցման արդյունքում. դրանից էլ հետևում է մետավերաբերությունը →.

Մետավերաբերություն (մետավերաբերվածություն, մետառեֆլեքսիվություն, **մետամեդիալություն (մետաուլորտայնություն)**). այն ինքնառեֆլեքսիվության հատուկ տեսակ է, որի ժամանակ նշանային համակարգի ներքո մետամակարդակից այս համակարգի վերաբերյալ արվում կամ ենթադրվում են արտահայտություններ (օրինակ՝ մեկնաբանություններ, նկարագրություններ): Մետաարտահայտությունները նույնպես նախադրում են արտահայտության օբյեկտի բնույթի գիտակցումը, ընդ որում, ընկալում են այն որպես նշանային համակարգի մի մաս: Ոլորտային հա-

մակարգերում այն նշանակում է, որ մետավերաբերությունը պարբերաբար հղում է կատարում իր «մտացածին լինելու բնույթին» և/կամ վերաբերության որակին և դրա հետ կապված ասպեկտներին և դրանով իսկ դրդում է ընկալողներին ռեֆլեքսիաների:

Ինքնառեֆլեքսիվություն (ինքնախորհրդածում / աուտոռեֆլեքսիվություն, ինքնավերաբերական նշանակություն) → ինքնավերաբերություն, որի ժամանակ մի համակարգի տարրեր արտահայտություն են անում նույն համակարգի այլ տարրերի կամ ամբողջ համակարգի կամ նրանց ասպեկտների մասին և ընկալողներին համապատասխան ռեֆլեքսիայի են դրդում:

Ինքնավերաբերական ցուցում → ինքնավերաբերություն առանց ինքնառեֆլեքսիվ արտահայտության (→ ինքնառեֆլեքսիվություն), մասնավորապես սիմվոլիկ և պատկերանշանային համակարգին ներակա վերաբերություն, ինչպես նաև շեղման միջոցով առաջին պլան մղման, որի արդյունքում համակարգի տարրը ինքն իրեն է հղում՝ որպես համատեքստից տարբերվողի:

Ինքնավերաբերություն (աուտովերաբերություն, ինքնա- և աուտովերաբերականություն). նշանային տարրի կամ համակարգի ինքն իրեն հղում կամ նույն համակարգի ներսում հղում մեկ այլ՝ նման կամ նույնանուն տարրի:

Մետատարրեր. տարրեր կամ արտահայտություններ ոլորտային համակարգի կամ համակարգի արդիականացման ներսում, որոնք բնորոշվում են → մետավերաբերականությամբ:

Մետաժանրեր. արվեստի ոլորտներին բնորոշ ժանրեր և ենթաժանրեր, որոնք բնորոշվում են → մետատարրերի կամ մետաարտահայտությունների գերակշռմամբ և դրանով իսկ՝ մետավերաբերությամբ:

	ԻՆՔՆԱՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ	ԻՆՔՆԱՌԵՖ-ԼԵՔՍԻՎՈՒԹՅՈՒՆ	ՄԵՏԱՎԵՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ/-ՌԵՖԼԵՔՍԻՎՈՒԹՅՈՒՆ
Վերաբերության համակարգային ներկայություն	✓	✓	✓
Համակարգի ներակա վերաբերություն՝ արտահայտության տեսքով		✓	✓
Նշանային համակարգի գիտակցում (օբյեկտի արհեստականության և նշանային բնույթի գիտակցում)՝ մետա- և օբյեկտի մակարդակների տարբերակմամբ			✓

Պատ. 3. Ինքնավերաբերական ձևերի տիպաբանություն

3. Մետականացման ներքին ձևեր

Հենվելով Վ. Վոլֆի տեսակետի վրա՝ ներկայացնենք մետավերաբերության բազում հնարավոր ստորադաս ձևերից մի քանիսի հիմնական արտահայտման ձևերը, ընդ որում, նշենք, որ խոսքն այստեղ հակադիր զույգերի մասին է: Դրանց Վ. Վոլֆն անդրադարձել է իր՝ 1993-ին հրատարակված աշխատության 3.2. գլխում: Այս ձևերը հիմնականում կարող են համադրվել իրար մեջ: Խոսքը ստորև ներկայացված հետևյալ չորս հակադիր զույգերի մասին է:

Սահմանումներ – 1

ա. ներտեքստային մետահորինվածք (բուն մետահորինվածք)՝ ի հակադրություն տրանստեքստային մետահորինվածքի (օտար և ընդհանուր մետահորինվածք) → ստեղծագործությանը ներակա մետավերաբերություն՝ ի հակադրություն արտաքին մետավերաբերության.

բ. ակնհայտը՝ ի հակադրություն թաքնված մետահորինվածքի → ակնհայտի հակ. թաքնված մետավերաբերությանը.

գ. **fictio** հակ. **fictum**-մետահորինվածք → **fictio** հակ. **fictum**-ետավերաբերություն, այսինքն՝ ռեֆերենտին և արվեստի ոլորտին ուղղված մետավերաբերություն.

դ. քննադատական՝ ի հակ. ոչ քննադատական մետահորինվածքի → քննադատական՝ ի հակ. ոչ քննադատական մետավերաբերության:

1. Մետավերաբերություն ստեղծագործության մեջ և ստեղծագործությունից դուրս

Նախ՝ հարկ է անդրադառնալ համակարգի ընդարձակվածության խնդրին, որի ներքո է տեղի ունենում ինքնավերաբերությունը, և դրսևորվում են դրա արտահայտման ձևերը: Որպես համակարգ՝ անշուշտ հանդես է գալիս ստեղծագործությունը, որտեղ էլ հենց տեղի է ունենում մետավերաբերությունը, երբ վերջինս հղում է ստեղծագործությանը: Վ. Վոլֆի կողմից, որպես «բուն մետաֆիկցիա» անվանված տարբերակ, օրինակ, հանդես է գալիս Ջոն Ֆաուլզի **“The French Lieutenant’s Woman”** վեպում⁴⁸, ուր հեղինակը իր կերպարների հորինված լինելու փաստը քննարկման առարկա է դարձնում:

Մետավերաբերության ընդարձակումն այս կամ այն ստեղծագործության շրջանակներից դուրս, ի հակառակ վերջինիս, այդքան էլ ակնհայտ չէ: Վ. Վոլֆը, օրինակ, հանդես է գալիս որպես բոլոր ոլորտային համակարգերի ներառման կողմնակից, ուստի նա համարում է, որ միջոլորտային արտահայտությունները երաժշտության գեղագիտության վերաբերյալ որևէ երգահանին նվիրված վեպում նույնքան մետավերաբերական են, ինչպես մի դրամայի՝ մյուսի միջոլորտային ծաղրերգությունը: Նշենք, որ Վ. Վոլֆը, Մ. Շմելինգը⁴⁹ և Մ. Ռոզը⁵⁰ ծաղրերգությունը և զգեստափոխությունը (Travestie) դասում են մետավերաբերության ոլորտին:

Ծաղրերգությունը քննադատական և միջտեքստային հղում է սկզբնաղբ-

48 Տե՛ս **Fowles, John**: The French Lieutenant’s Woman. London: Triad Panther 1977 [1969]:

49 Տե՛ս **Schmeling, Manfred**: Authothematische Dichtung als Konfrontation. Zur Systematik literarischer Selbstdarstellung. In: “Zeitschrift für Literaturwis-senschaft und Linguistik” 8(1978), S. 77-97:

50 Տե՛ս **Rose, Margaret**. A.: Parody/Meta-fiction. An Analysis of Parody as a Critical Mirror to the Writing and Reception of Fiction. London: Croom Helm 1979:

յուրին (առաջնային տեքստին) կամ սկզբնաղբյուրի խմբին, որը, իբրև այդպիսին, իր արհեստականությամբ հանդես է գալիս որպես արժանի քննադատություն: Այն իր հերթին մետավերաբերության հիմնական պայման է, այլ խոսքերով՝ ենթադրում է «Ֆիկցիոնալության» վերաբերյալ արտահայտության ներառում: Այս երևույթին կարելի է հետևել սիրավեպային ծաղրերգության մեջ, այսպես, օրինակ, Ջ. Ֆաուլզի “The French Lieutenant’s Woman” («Ֆրանսիացի լեյտենանտի կինը») վեպի երկրորդ սենտիմենտալ ավարտին, երբ Չարլզը և Սառան երկար սպասելուց հետո միավորվում են իրենց ընդհանուր երեխայի հետ.

At last she looked up at him. Her eyes were full of tears, and her look unbearably naked. Such looks we have all once or twice in our lives received and shared; they are those in which worlds melt, pasts dissolve, momets when we know, in the resolution of profoundest need, that the rock of ages can never be anything but love, here, now, in these two hands’ joing, in this blind silence in which one head comes to rest beneath the other; and which Charles, after a compressed eternity, breaks [...] ⁵¹.

Բնականաբար, նման «օտար մետահորինվածքը»՝ այնպես, ինչպես ընդհանուր մետահորինվածքը, օրինակ՝ գեղագիտական ռեֆլեքսիան, միայն անուղղակի է հղում այն տեքստին, որն ընթերցում են ներկա պահին: Միաժամանակ ինքնավերաբերական հղում է առաջանում, քանի որ տեքստը, ինչպես և սկզբնաղբյուրը, գրական համակարգի մի մասն են: Անկախ դրանից՝ ծաղրերգության դեպքում հաճախ կարելի փաստել այն միտումը, որ այլ տեքստերին ուղղված մետավերաբերությունը կարծես թե սեփական տեքստին է հղում, մասնավորապես այն դեպքերում, երբ ծաղրերգությունն ի ցույց է դնում սեփական տեքստի պաստիշ (ոճավորում) հանդիսանալը: Այսպիսով, մի կողմից ակնհայտ է դառնում սեփական մետամտացածինը և մյուս կողմից՝ օտար և ընդհանուր մետամտացածինը, որոնք իրենցից ներկայացնում են տարբեր հասկացություններ:

II. Էքսպլիցիտ՝ ի հակ. իմպլիցիտ մետավերաբերության ⁵²

Երկու ձևերն էլ խոսքային ոլորտներում կարող են սահմանվել իմաստային մետավերաբերական բառայինների մեջբերված լինելու չափանիշով: Այն բոլոր տեղերում, ուր առկա է մեջբերումը, խոսքը վերաբերում է էքսպլիցիտ մետավերաբերությանը: Օրինակ՝ Ջ. Ֆաուլզի “The French Lieutenant’s Woman” («Ֆրանսիացի լեյտենանտի կինը») վեպի հետևյալ նախադասությանը. “This story I am telling is all imagination: These characters I create never existed outside my own mind” ⁵³. Բանն այն է, որ “story” («պատմություն»),

51 Տե՛ս **Fowles, John**, ebd, S. 393. «Վերջում նա հայացքը դարձրեց Չարլզին: Աչքերն արցունքակալած էին, և հայացքն էլ՝ անտանելի մերկ: Այդպիսի հայացքներ մենք ստանում կամ փոխադարձում ենք կյանքում հազիվ մեկ-երկու անգամ. դրանցում աշխարհներ են հալչում, անցյալներ են տարալուծվում. դրանք այն պահերն են, երբ գիտենք, որ խորագույն պահանջների իրականացմամբ տարիների ընթացքում ձևավորված այդ ժայռը, բացի սիրուց, չէր կարող ուրիշ այլ բան լինել, և ահա հիմա այս պահին՝ այս երկու ձեռքերի կտր լռության միախուսմամբ, ուր մի ձեռքը հանգստանում է մյուսի ներքո, և որը Չարլզը խզում է՝ սեղմված հավիտենականությունից հետո» (թարգմ. մերն է - Ե. Էթարյան):

52 Լ. Հուտչենը (**Hutcheon**, Linda: *Narcissistic Narrative. The Metafictional Paradox*. London: Methuen(1984 [1980], S. 7) այս առումով տարբերակում է “overt” և “covert metafiction”-ի միջև:

53 «Պատմությունը, որը ես պատմում եմ, երևակայություն է. այս կերպարները, որոնց ես ստեղծել եմ, երբևէ գոյություն չեն ունեցել իմ պատկերացումից դուրս», (թարգմ. մերն է - Ե. Էթարյան):

“telling” («պատում») և “characters” («կերպարներ») բառերը գրական առումով մետավերաբերական են, և այս արտահայտության հիմքում ընկած է գրական ֆիկցիոնալության խնդիրը:

Իմպլիցիտ մետավերաբերական՝ դրան հակառակ, համարվում են տեքստային հնարները և պատմությունների դրվագները, որոնք ըստ էության չեն մեջբերվում որպես մետաարտահայտություններ, սակայն պարունակում են տարրեր, որոնց միջոցով անուղղակիորեն ուշադրությունը սևեռվում է մտացածինի ոլորտից եկող փաստերի կամ խնդիրների վրա: Օրինակ՝ Զ. Ֆաուլզի վերոնշյալ վեպի մի դրվագում նկարագրվում է 1980 թ. գնացքի խցում գտնվող մի տղամարդու կերպար (ընդ որում, այն ակնհայտ նույնական է Զ. Ֆաուլզի հետ), որը գրում է այս պատմությունը միայն 100 տարի անց: Զ. Ֆաուլզն այսպիսով պարադոքսային «անհնարին» ձևով հաղթահարում է անհաղթահարելի սահմանները գոյաբանական և ժամանակային հարթությունների միջև, ինչն իրենից ներկայացնում է այնպիսի հնար, որը նարատոլոգիայի մեջ հայտնի է որպես մետալեպս⁵⁴. այն օգտագործվում է որպես մտացածինի ցույց դնելու հնար: Հենց իմպլիցիտ մետականացման դեպքում է անհրաժեշտ համագործակցությունն ընկալողի հետ, հակառակ դեպքում տեքստին ներակա մետականացումը կարող է պարզապես չընկալվել: Նման նշույթավորումը կարող է տեղի ունենալ տարբեր հնարների միջոցով առաջին պլան մղման ժամանակ, այն կարող է նաև օգտվել մետավերաբերական տարբեր հարատեքստերից (օրինակ՝ ստեղծագործությունների վերնագրերից սկսած) և ընկալվել, ինչպես Ֆաուլզի դեպքում, որպես էքսպլիցիտ մետավերաբերություն:

III. Fictio- vs. fictum կամ ոլորտային մետավերաբերություն՝ ի հակադրություն ռեֆերենտին ուղղված մետավերաբերության

Եվս մեկ անգամ հղելով Զ. Ֆաուլզին, նշենք, որ նրա՝ “This story I am telling is all imagination” նախադասությունը, արծարծում է վերաբերության խնդիրը և **fictum-ի կամ ռեֆերենտին ուղղված մետավերաբերության** հիասքանչ օրինակ է: Նկատենք, որ fictum-մետավերաբերության ցուցանիշը գուտ **հղումն** է վերաբերությանը՝ անկախ այն բանից, թե արդյոք այս ինքնառեֆլեքսիվ հղման արդյունքը որպես «իրական» թե «մտացածին» է հանդես գալիս: Երբ Զ. Ֆաուլզի պատմողը՝ անկախ վերաբերության հարցերից, վերջին գլխի սկզբում մանրամասներ է արծարծում արձակագրի արվեստից (“the novelist’s craft”). այդ դեպքում խոսքը **fictio- կամ ոլորտին առնչվող մետավերաբերության** մասին է. “It is a time-proven rule of the novelists’s craft never to indtroduce any but your very minor new characters at the end of book”⁵⁵. Օրինակ՝ այստեղ ցուցադրված fictio-մետականացմանը խոսքային պատմողական արվեստում կպատկանեին Նյունիսի գի իմաստով

54 Հմմտ. Genette, Ge'rad: Figures III (Collection 'Tel Quel'). Paris: Seuil 1972, S. 243-251), հմմտ. նաև Wolf, Werner: “Metalepsis as a transgenetic and transmedial phenomenon. A case study of the possibilities of 'exporting' narratological concepts”. In: Jan Christoph Meister (Hrsg.): Narratology Beyond Literary Criticism. Berlin: de Gruyter 2005. S. 83-107.

55 Fowles, John, ebd, S. 394. «Վիպասանական աշխատանքի՝ ժամանակի ընթացքում ապացուցված օրենք է. սեփական կերտած որևէ կերպար չներկայացնել գրքի վերջում. միայն ամենաանշաններին» (թարգմ. մերն է - Ե. Էթարյան):

«մետապատումը», ինչպես նաև մետալեզվական երևույթները:

Ոլորտային մետավերաբերության տարբերակումը, **ի հակադրություն ռեֆերենտին ուղղված մետավերաբերության**, այդ պատճառով իր կարևորությունն է ստանում պատմողական արվեստից դուրս, քանի որ վերաբերության կամ իրականության ու մտացածինի հակադրությունը Պլատոնի արվեստի անիրականության քննադատությունից ի վեր զգալի դեր է խաղացել այստեղ և մասնավորապես պոստմոդեռնիզմի դարաշրջանում՝ Բոեյն Մաքհեյլի թեզից հետո, դարձավ նրա ամենավառ առանձնահատկությունը⁵⁶:

IV. Քննադատական մետավերաբերությունը՝ ի հակադրություն ոչ քննադատականի

Այս վերջին տերմինաբանական հակադրությունը, որը հատկապես կարևոր է ոչ միայն պատումի մետահորինվածքի համար, առնչվում է մետավերաբերության գործոններին (այս երևույթին անդրադարձել է Մանֆրեդ Շմելինգը)⁵⁷: Գրականագիտական ուսումնասիրություններում, որոնք մասնավորապես առնչվում են պոստմոդեռնիստական պատումի մետահորինվածքին, ստեղծվում է այն տպավորությունը, կարծես մետավերաբերությունը ցանկանում է **քննադատորեն** մերկացնել ֆիկցիոնալությունը և կամ ստեղծագործության արհեստական բնույթը, դրանով իսկ ապակառուցում է պատումի հավաստիությունն ու միաժամանակ գեղագիտական պատրանքը: Այն, որ դա իրենից ներկայացնում է կոպիտ կրճատում, փաստում են 18–19-րդ դարերում տարածված հավաստիության ֆիկցիաները, որոնց շնորհիվ վեպի գործողությունները ներկայացվում էին որպես «ձջմարիտ իրողություններ»: Դրանց թվին են պատկանում ձջմարտացիության հավաստիացումները (մասնավորապես վկայակոչումները ռեալ վերաբերությանը): Այսպես, օրինակ, ամենագետ (աուկտորիալ) պատմողի միջոցով դրանք վերածվում են ձևական **fictum**–մետաֆիկցիայի, սակայն գործառույթային առումով չեն ծառայում պատմվածի քննադատությանը, այլ հաստատում են այն որպես ձջմարիտ: Այդ առումով հարկ է տարբերակել **քննադատական և ոչ քննադատական** մետաֆիկցիաները:

Հստակեցման համար անհրաժեշտ ենք համարում ստորև ևս մեկ անգամ ակնարկի տեսքով ներկայացնել մետավերաբերական տեսակների չորս զույգերը և դրան պատկանող սահմանումները:

V. Սահմանումներ 2.

Մետականացման արտահայտման ձևերն առանձին վերցված

Ներտեքստային մետամտացածինը (բուն մետամտացածինը)՝ ի հակադրություն տրանստեքստուալ մետամտացածինին (օտար և ընդհանուր մետամտացածին) → տեքստին ներակա՝ ի հակադրություն տեքստին և արտատեքստային մետավերաբերություն:

- **Ստեղծագործությանը ներակա մետավերաբերությունը** վերաբերում է կոնկրետ ստեղծագործության տարրերին ու ասպեկտներին:
- **Մետավերաբերություն ստեղծագործությունից դուրս.** մետակա-

56 Տե՛ս **McHale, Brian**: Postmodernist Fiction. London/New York: Routledge 1987. S. 9–10.

57 Տե՛ս **Schmeling, Manfred**, ebd, S. 89.

նացումը վերաբերում ստեղծագործությունից դուրս գտնվող տարրերին և ասպեկտներին (այն նման է միջտեքստային առանձին վերաբերությանը, դա կամ վերաբերում է սպեցիֆիկ մեկ այլ ստեղծագործությանը, կամ մեկ այլ սերող կամ միջնորդավորված համակարգի, որը նման է միջտեքստային համակարգային վերաբերությանը):

Էքսպլիցիտ՝ ի հակադրություն իմպլիցիտ մետահորինվածքի → Էքսպլիցիտ՝ ի հակադրություն իմպլիցիտ մետավերաբերության.

- **Էքսպլիցիտ մետավերաբերություն.** մետականացումը ի ցույց է դրվում կոնկրետ արվեստի ձևին բնորոշ միջոցներով. կամ խոսքային սինվոլիկ ձևերի դեպքում՝ որպես մետավերաբերական բառայնությունում առկա և այդ իմաստով մեջբերվող, կամ պատկերանշանային պատկերավոր ոլորտներում՝ որպես մետավերաբերական պատկերման բովանդակություն (նկարիչը իր արվեստանոցում):
- **Իմպլիցիտ մետավերաբերություն.** այն ի ցույց է դրվում կոնկրետ (մեծմասամբ որպես շեղում նշմարվող կամ այլ կերպ ակնառու) օգտագործվող բովանդակային կամ ոլորտային նյութի ձևավորմամբ, սակայն իր նույնացման համար այն նշույթավորում է պահանջում (որպես կանոն՝ էքսպլիցիտ մետավերաբերության միջոցով):
- **Fictio- vs. fictum-** մետապատում → **fictio- vs. fictum-**մետավերաբերություն կամ, ի հակադրություն ոլորտին, ռեֆերենտին ուղղված մետավերաբերություն.
- **Fictum-**մետավերաբերություն. մետավերաբերության բովանդակությունը հենց ինքը վերաբերությունն է և դրա հետ կապված տարրերը (օրինակ՝ ռեալ վերաբերության հաստատումը, առաջարկումը կամ էլ ժխտումը).
- **Fictio-**մետավերաբերությունը. մետավերաբերության բովանդակությունը կազմում են ստեղծագործության կամ ստեղծագործական խմբի միջնորդավորվածության կամ գործի արհեստական բնույթի (սարքված լինելու) հետ կապված ասպեկտները:

Քննադատական՝ ի հակադրություն ոչ քննադատական մետապատումի → քննադատական՝ ի հակադրություն ոչ քննադատական մետավերաբերության.

- **քննադատական մետավերաբերություն.** մետականացման գործառույթ/ազդեցությունն իրենցից ներկայացնում են քննադատական դիստանցիայի հաստատում այն օբյեկտի հանդեպ, որին հղում է մետաարտահայտությունը:
- **ոչ քննադատական մետավերաբերությունը.** մետականացման գործառույթ/ազդեցությունն իրենց ներկայացնում է չեզոք կամ հաստատող արտահայտություն այն օբյեկտի մասին, որին վերաբերվում է մետաարտահայտությունը:

Եզրակացություններ

Ամփոփելով նշենք այն խնդիրները, որոնք կարող են հետագա ուսումնասիրությունների.

Ֆորմալ խնդիրները, մետականացման և հարակից երևույթների ուսումնասիրությունը.

ա. Մետականացման ձևերի առկա տիպաբանության վերանայումը,
բ. Մետականացման և ինքնավերաբերության հաճախակի հանդիպող ձևերի, այն է՝ միջտեքստայնության, միջուրոտայնության, *mise en abyme*-ի միջև կապի ուսումնասիրությունը:

Գործառույթների հետազոտությունը, մետականացման գործառույթների պատմությունը, մասնավորապես հետևյալ երևույթների ուսումնասիրությունը.

ա. մետականացման՝ որպես 18-րդ դարից սկսած աչքի ընկնող և գնալով լայն տարածում ստացող եվրոպական պատմամշակութային երևույթի, ինչպես նաև նրա պայմանների ուսումնասիրությունը, որոնք խթանում կամ խցանում են մետականացումը,

բ. մետականացման և պոստմոդեռնիզմի փոխհարաբերակցությունը, մասնավորապես այն հարցի ուսումնասիրությունը, թե ինչու է այս երևույթը հենց պոստմոդեռնիզմի դարաշրջանում չլսված ուժգնությամբ հանդես գալիս, մետականացման ուսումնասիրությունը՝ որպես մշակութային ուշ շրջանում առաջացած և ուղորդող երևույթ⁵⁸,

գ. մետականացման ուսումնասիրությունը տարբեր մշակույթների գրականության մեջ,

դ. մետականացման գեղագիտական ազդեցության ուսումնասիրությունը, մասնավորապես հարաբերակցությունը մետականացման և գեղագիտական պատրանքի միջև ⁵⁹,

ե. մետականացման քննադատության, մասնավորապես մետականացման «օգուտի» քննությունը, ինչպես նաև դրա հետ կապված «կորուստների»,

զ. եվ, իհարկե, կենտրոնական հարցերից է մնում մետականացման գործառույթների խնդիրը:

Ելենա Հ. Էթարյան – ուսումնասիրությունն ու մասնագիտական կրթությունը մասամբ իրականացրել է Գերմանիայի մի շարք համալսարաններում: Հանդիսանում է DAAD-ի, KAAD-ի, Alexander von Humboldt հիմնադրամների կրթաթոշակակիր, ինչպես նաև «Գերմանախոս երկրների կրթաթոշակակիրների հայկական միավորում» հասարակական կազմակերպության փոխնախագահ, KAAD-ի կոլեգիայի, ինչպես նաև IVG-ի՝ «Գերմանագիտության միջազգային միավորման» անդամ: Հետազոտության ոլորտները՝ ժամանակակից գերմանական գրականություն, գրականության տեսություն, գրականության դասավանդման մեթոդիկա: Հայրենական և արտասահմանյան ամսագրերում լույս տեսած ավելի քան 40 գիտական հոդվածների հեղինակ է:

58 Արդեն Թ. Մանի «Դոկտոր Ֆաուստուսում» (Ադրիան Լևերքյունի հարցի մեջ. «Ինչու՞ այն պետք է թվա ինձ, կարծես բոլորը, ոչ՞ արվեստի բոլոր միջոցները և պայմանականությունները այսօր միայն որպես ծաղրերգություն կարող են դիտվել» լթարգմ. մերն է - Ե. Էթարյան) (Mann, Thomas: Doktor Faustus. Frankfurt a. M.: Fischer 1971 [1947], S. 135) և Թ. Ադորնոյի «Նոր երաժշտության փիլիսոփայության» մեջ (Adorno, Theodor: Philosophie der neuen Musik. (Gesammelte Schriften, Bd. 12). Frankfurt a. M.: Suhrkamp 1975 [1949], S. 167) աչքի է ընկնում նշված կապը մետականացման և ավանդական մեթոդների ու երաժշտության գաղափարների «սպառված լինելու» զգացողության միջև, որը նկատելի է գրականության և նրա մասին խորհրդածման մեջ և որը, իր հերթին, Ռ. Բարտի կողմից հիշատակված՝ “literature of exhaustion” (1967) հայտնի առարկան պոստմոդեռնիստական գեղագիտության կլիշեյի է վերածվել:

59 Wolf, Werner, ebd.

Summary

METAIZATION IN THE LITERATURE AND THE PROSPECTS OF ITS RESEARCH

Elena O. Etaryan

Key words – self-referential literature, self-reflection, meta-fiction, meta-language, meta-narration, meta-description, creating illusions and disillusioning methods of metaization.

The subject of the study of this article is the phenomenon of metaization in literature, which became widespread in the 1960s of the 20th century and most often is used to describe techniques in postmodern literature and experimental literature. It should be noted that the study of this phenomenon also involved Russian formalists and structuralists, up to deconstructivists.

Our research highlights the problems associated with the term “metaization”, namely, the diversity in its use, including the problems associated with defining and delineating its techniques (such as narrator’s comments, intertextual links, mise en abyme (story in story), refraction in the narrative, irony plays, textual contradictions, metalepses, paratexts, etc.).

The studying of the functions of metaization takes the central place in our article.

The conclusion of the article indicates the prospects of researching the subject of our article.

Резюме

МЕТАИЗАЦИЯ В ЛИТЕРАТУРЕ И ПЕРСПЕКТИВЫ ЕЕ ИССЛЕДОВАНИЯ

Елена О. Этарян

Ключевые слова – самоотнесенность литературы, саморефлексия, метафикция, метаязык, метаповествование, метаописание, создающее иллюзии и дезиллюзионирующие приемы метаизации.

Предметом исследования данной статьи является феномен метаизации в литературе, который получил широкое распространение в 60 гг. 20 в. и чаще всего использовался для описания приемов в литературе постмодерна и экспериментальной литературе. Следует отметить, что изучением этого явления также занимались русские формалисты и структуралисты, вплоть до деконструктивистов.

В нашем исследовании освещаются проблемы, связанные с термином ‘метаизации’, а именно с многообразием в его использовании, в том числе проблемы, связанные с определением и разграничением ее приемов (к числу которых относятся комментарии рассказчика, интертекстуальные связи, mise en abyme (рассказ в рассказе), преломления в повествовании, игры иронии, текстовые противоречия, металепсы, паратексты итд).

Центральное место в нашей статье занимает изучение функций метаизации.

В заключении статьи указываются перспективы исследования предмета нашей статьи.

Էլ. փոստ – etaryan@mail.ru

ՀԻՄՆԱԳՐԱՆԵՐ

Թ. (ԺԵ) րափր, ԹԻՎ 4 (60), ԽՈՒՐԵԿԵՐ-ՂԵԿՐԵԿԵՐ, 2017

ՀՀՎ ԽԱՅԻՆԱՅԿԱԿԱՆ ԽԱՅԵՐԵԱ